ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2025 թվականի N 1401-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ԹԻՎ 0514-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 15-ի թիվ 0514-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն.

1) Որոշման 1-ին կետում «74.0 քմ ներքին» բառերի փոխարեն կարդալ «74.0 քմ արտաքին», իսկ «62.4 քմ արտաքին» բառերի փոխարեն կարդալ «62.4 քմ ներքին»:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1402-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Արթուր Մկրտչյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Արթուր Մկրտչյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Հանրապետության փ., 20շ. 1-ին հարկում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Արթուր Մկրտչյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1403-Ա

ԿՈՐՅՈՒՆ ՌԱՖԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի ,29-րդ ,33-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2024թ. նոյեմբերի 29-ի 131-Ն որոշումը ,Կորյուն Ռաֆիկի Կարապետյանի լիազորված անձ Սվետլանա Կարապետյանի 15.12.2025թ. թիվ 6568 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կորյուն Ռաֆիկի Կարապետյանին (ծնվ. 25/06/1967թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 15-րդ փողոց, 10/1 հասցեում /սեփականության վկայական N 15122025-04-0022/ գտնվող 0.0299 հա մասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Արմավիր համայնք,Սարդարապատ գյուղ, 15-րդ փողոց,10/2 հողամաս, իսկ 0.1024 հա հողամասի հասցեն թողնել նույնը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք,Սարդարապատ գյուղ, 15-րդ փողոց,10/2:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 1404-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով, ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին , 2-րդ, 4-րդ կետով, հաշվի առնելով ,որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք,107-րդ թաղամաս,239 հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով , չեն առաջանում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի , այդ թվում ՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին , հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2024թ.-ի նոյեմբերի 29-ի թիվ 131-Ն որոշումը,Գարիկ Ռաֆիկի Թովմասյանի 13.11.2025 թվականի թիվ 5994 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գարիկ Ռաֆիկի Թովմասյանին (ծնվ. 13.11.1996թ.) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք,107-րդ թաղամաս,239 հասցեում 2020թ. ինքնակամ կառուցված 253,3 քմ ներքին և 307,7 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը համարել օրինական:

2. Ընդունել ի գիտություն , որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին >> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված ընդհանուր արտաքին 307,7 քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով ՝ 1422 << դրամ, ընդհանուր ՝ 437549 /չորս հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր քառասունինը/ << դրամ,ինքնակամ բացված պատուհանի և դռան օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1422 << դրամ, ընդհանուր՝ 7110 /յոթ հազար հարյուր տասը/ << դրամ,ընդամենը՝ 444659 /չորս հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր հիսունինը/ << դրամ :

5. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1405-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Քրիստինա Անտոնյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Քրիստինա Անտոնյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Հանրապետության փ. 19/1 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Քրիստինա Անտոնյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1406-Ա

24-00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «Համայնքի տարածքում հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն տալու կարգը սահմանելու մասին» թիվ 962-Ն որոշմամբ, Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի «Արմավիր համայնքում տեղական տուրքերի և վճարների 2026 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 150-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «ՆԱՋԵԼԻ» Ա/Կ ՍՊԸ-ի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել «ՆԱՋԵԼԻ» Ա/Կ ՍՊԸ-ի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Շահումյան փ. 42/3 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվել առևտրով 24:00-ից հետո :

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման,հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին «ՆԱՋԵԼԻ» Ա/Կ ՍՊԸ-ին տալու համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1407-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Հայկ Խալաթյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Հայկ Խալաթյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Հանրապետության փ. 10Ա հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Հայկ Խալաթյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2025 թվականի N 1408-Լ

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել՝

1) աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը և աղետների ռիսկի նվազեցմանը և արտակարգ իրավիճակներին արձագանքմանն ուղղված գործողությունները՝ համաձայն հավելված 2-ի:

3. Համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Մկրտչյանին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի կազմում ընդգրկված պաշտոններում զբաղեցրած կամ նոր նշանակված անձանց 5-օրյա ժամկետում ծանուցել սույն որոշման մասին:

4. Որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի
ԹԻՎ 1408-Լ ՈՐՈՇՄԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. **Համայնքի ԱՌԿ (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի ղեկավար կազմը՝**

1) ԱՌԿ խորհրդի ղեկավար - Արմավիր համայնքի ղեկավար.

2) ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ - աղետներին պատրաստվածության ապահովման պատասխանատու - Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ.

3) ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ - ինժեներական միջոցառումների ապահովման և տարհանման պատասխանատու - Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ.

4) ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալ-տեղահանված և/կամ տարահանված բնակչության կարիքների գնահատման և աջակցության ցուցաբերման գործընթացն ապահովող պատասխանատու - աշխատակազմի քարտուղար.

5) խորհրդի քարտուղար – Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ.

2. **ԱՌԿ խորհրդի անդամները՝**

1) ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների իրականացման պատասխանատու - Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար (համաձայնությամբ),

բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու - Ներքին գործերի նախարարության Ոստիկանության ՀՈԳՎ Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի պետ (համաձայնությամբ)/,

գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու – Բյուջետային եկամուտների հաշվառման,հավաքագրման, տրանսպորտի վերահսկողության բաժնի պետ

դ. ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատու-աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ զարգացման ծրագրերի և արտաքին կապերի գծով,

ե. կապի ապահովման պատասխանատու - «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի Արմավիրի մասնաճյուղի ղեկավար /համաձայնությամբ/,

զ. բժշկական օգնության և սպասարկման պատասխանատու - «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն /համաձայնությամբ/,

է. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու – համայնքապետարանի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

ը. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բարեկարգում» տնօրինության տնօրեն,

թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու - Արմավիր համայնքի ղեկավարի բ;օգնական,

ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու – աշխատակազմի գլխավոր մասնագետ /սոցիալական հարցերի գծով/

2) աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ զորահավաքի և զորակոչի գծով.

3) «Արմավիր» ՋՕ ընկերության Արմավիրի տեղամասի պատասխանատու /համաձայնությամբ/.

4) Նորավան գյուղի վարչական ղեկավար.

5) Մայիսյան գյուղի վարչական ղեկավար.

6) Մյասնիկյան գյուղի վարչական ղեկավար.

7) Խանջյան գյուղի վարչական ղեկավար.

8) Լուկաշին գյուղի վարչական ղեկավար.

9) Հացիկ գյուղի վարչական ղեկավար.

10) Սարդարապատ վարչական ղեկավար.

11) Այգեվան գյուղի բնակավայրի վարչական ղեկավար.

12) Լենուղի գյուղի վարչական ղեկավար.

13) Արաքս գյուղի վարչական ղեկավար.

14) «Արմավիրի N 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/.

15) «Արմավիրի N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/.

16) «Արմավիրի Մովսես Սիլիկյանի անվան N 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/.

17) «Արմավիրի N 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/.

18) «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/.

19) «Ճանշին վարպետ» ՓԲԸ-ի տնօրեն /համաձայնությամբ/.

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի
ԹԻՎ 1408-Լ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՌԿ (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի աշխատակարգը՝

1) Սույն աշխատակարգով սահմանվում են Արմավիր համայնքի ԱՌԿ խորհրդի գործողությունների իրականացման ընթացակարգերը.

2) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են Արմավիրի համայնքապետարանում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ.

3) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը գումարվում են տարվա ընթացքում առնվազն երկու անգամ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ԱՌԿ խորհրդի ղեկավարի որոշմամբ.

4) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ քննարկվում են համայնքի ԱՌԿ պլանի մշակման, ճշգրտման և խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերը կամ համայնքի ԱՌԿ պլանով սահմանված գործողությունների իրականացումը.

5) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստի ժամանակ ԱՌԿ խորհրդի ոլորտային պատասխանատուները ներկայացնում են իրենց վերապահված ոլորտում կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և առաջարկվող նոր միջոցառումները.

6) Համայնքի ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից և կցվում են համայնքի ԱՌԿ պլանին:

2. ԱՌԿ խորհրդի աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված գործողությունները՝

1) համայնքի վտանգների, խոցելիության և կարողությունների բացահայտումը.
2) ԱՌԿ պլանի մշակումը, իրականացման ապահովումը, վերահսկումը.
3) ԱՌն և աղետներին դիմակայելու կարողությունների զարգացումը.
4) համայնքում ԱՌն միջավայրի և մշակույթի ձևավորումը.
5) արտակարգ իրավիճակներին արձագանքման պատրաստվածության ապահովումը.
6) ԱՌԿ պլանի ինտեգրման ապահովումը համայնքի զարգացման ծրագրում,

7) համայնքի վաղ ազդարարման համակարգի ստեղծումն ու վերջինիս պահպանումը.

8) «Դիմակայուն համայնք» ստեղծելու նպատակով ԱՌԿ գործընթացներում ուսումնական հաստատությունների և բնակչության ակտիվ ներգրավվածության ապահովումը.

9) բնակչության համար արտակարգ իրավիճակներում վարքականոնների և պարտականությունների տարածումը, դրանց կիրառման ապահովումը,

10) փրկարարական, վթարավերականգնողական և հրդեհաշիջման պարզագույն աշխատանքներում, համայնքի բնակչության շրջանում, կամավորների նախապատրաստման և ներգրավման ապահովումը.

11) հրդեհների կանխարգելման աշխատանքների իրականացում՝ բնակչության իրազեկման և ուսուցման միջոցով.

12) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված թեմաներով ուսումնավարժությունների նախապատրաստում և անցկացում:

3. ԱՌԿ խորհրդի արտակարգ իրավիճակներին արձագանքմանն ուղղված գործողությունները՝

1) համայնքի բնակչության, նյութական արժեքների պաշտպանության ապահովումը.

2) համայնքի բնակչության ազդարարման իրականացումը.

3) արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության փոխանակման իրականացումը,

4) համայնքի բնակչության տարահանման կազմակերպումը և իրականացումը.

5) հատուկ կարիքավոր մարդկանց, հղի կանանց և երեխաների անվտանգ տարահանման/պատսպարման կազմակերպումը և իրականացումը.

6) իր իրավասության շրջանակներում՝ փրկարարական, վթարավերականգնողական և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

7) իր իրավասության շրջանակներում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ հասարակական կարգի պահպանումը.

8) իր իրավասության շրջանակներում՝ արտակարգ իրավիճակների ժամանակ դիակապտության, թալանի, բռնության և այլ հանցավոր երևույթների կանխումը.

9) արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացած շինարարական աղբի մաքրումը համայնքի տարածքից ու ճանապարհներից, նոր տարանցիկ ճանապարհների հիմնումը, կամուրջների վերականգնումը.

10) իր իրավասության շրջանակներում՝ տուժածների բժշկական և առաջին օգնության կազմակերպումն ու իրականացումը.

11) սանիտարահիգիենիկ և համաճարակային վիճակի պահպանումը.

12) բնակչությանը սննդով, ջրով, դեղորայքով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը.

13) ջրային և սննդամթերքի պաշարների կուտակումը և նպատակային օգտագործումը.

14) բնակչության կոմունալ-էներգետիկ ապահովումը.

15) տուժած տարածքների գազամատակարարման և էներգամատակարարման վերականգնման կազմակերպումը, անհրաժեշտության դեպքում առանձին հատվածներում դրանց դադարեցումը.

16) դիակների հուղարկավորման համար հողհատկացման և հուղարկավորման կազմակերպումը.

17) կորած, միայնակ մնացած երեխաների հայտնաբերումը, գրանցումը և ուղղորդումը համապատասխան սոցիալական ծառայություններ.

18) երեխաների վերամիավորումն ընտանիքներին աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

19) իր իրավասության շրջանակներում՝ շենքերի, շինությունների, կամուրջների, թունելների և այլ առանցքային հանգույցների տեխնիկական վիճակի գնահատումը.

20) վնասի և կարիքների վաղ գնահատումը և հայտերի ներկայացումը մարզային կամ հանրապետական հանձնաժողովին.

21) տեղահանված և/կամ տարահանված բնակչության կարիքների գնահատման և աջակցության ցուցաբերման գործընթացի կազմակերպումը և իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1409-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Թելման Եսայանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Թելման Եսայանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Երևանյան փ. 53 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների իրացումով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Թելման Եսայանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 Դեկտեմբերի 2025 թվականի N 1410-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 150-Ն որոշումը և Ա/Ձ Վահագն Բաղդասարյանի հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ա/Ձ Վահագն Բաղդասարյանի հայտը և թույլատրել քաղաք Արմավիր, Սայաթ-Նովա փ. 204 հասցեում գտնվող հիմնական շինությունում զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով:

2.Հանձնարարել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնին Ա/Ձ Վահագն Բաղդասարյանին տալու համապատասխան թույլտվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 23
ք. Արմավիր